



ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ.
ԿԻՓԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1896 ՀԱՏՈՐ ԾԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՊԱՏԿԵՐՈՒՍՈՅՑ ԳԻՐՔ

(Տես յ'էջ 348)

354. անշուշտ պատկերազարդ Աւետարանէ մ'առնուած է, և է Յովակիմայ և Աննայի տեսնելն թոյնոց բոյն մ'ի ծայր ծառի, զոր կուցուցընէ Հրեշտակ մի, յոյս տալով որ իրենք այլ կրնան դառակ ունենալ. պատկերին նակարին վրայէն Հրեշտակ մ'այլ կուցուցընէ ձագուց մայրը, որ անոնց ուտելիք կու բերէ: Եւ վովակիմայ տան շէնքին մասերու վրայ նշանաւ կած է զուեոց անուններն, լազուարտ, կանաչ, կարմիր, ինչպէս և Ս. Աննայի զգեստոց վրայ այլ:

364. Երմիայի Աւետարանէ մ'օրինակուած է Աւետումն. Գարբիելի առ Ս. Կոյան, որոյ զգեստոց վրայ նշանակած են գոյներն. Հրեշտակն՝ ըստ սովորականին ունի ձախ ձեռքում շատ երկայն և նիզակածայր գաւազան կամ քարոզակ. վրայն՝ գոյներն նշանակուած են լազուարտ, զինուֆր, թեւերուն մաս մ'այլ թուի սեռ. Ս. Աստուածածնի զգեստն՝ լա-

զուարտ, տան շէնքն՝ կանաչ, կողմերն՝ ճնարակ. նստոց բարձն՝ ճնարակ, ոտից տակի բարձն՝ կարմիր. (Թիւ 18):

374. Քրիստոսի ծննդեան պատկերն է, ըստ ձեռագիր Աւետարանաց, միանգամայն և Հռփուաց աւետիսն, Մոզուց գալն, Ս. Յովսէփայ զտրմացեալ նստիլն. գոյներն այլ նշանակուած են. յատակն ոսկի, Ս. Աստուածածնի անկողնի շրջանակն՝ գայլ գոյն, ներքին կողմն զն(ուֆր), ուրիշ տեղ՝ կանաչ, ձեռարակ, և այլն:

384. Քրիստոսի քառասնօրեայ ընծայումն ի տաճարն. Ս. Աստուածածինն և Ս. Յովսէփ ընծայելու կամ կամ զընծայեալն ընդ ունելոս. կերպով՝ բազուկին կարկառուն առ Յիսուս՝ ի գիրկս Սիմէոնի. ասոր քով կեցած է և պառաւն. Աննա Երեսին վարի կողմն. Քրիստոսի Մկրտութիւնն է, սովորաւ կան տգեղութեամբ աւելի վայելուլ է

Քրիստոսի որբի բերող մանկադէմ հրեշտակն:

39. Յարութիւն Ղազարու, որոյ քորք ընկած կան յոտս Յիսուսի. ետեւը երկու առաքեալք, առջեւը երեք անձինք, որոց մէկն՝ քիթը գոցէ, որ մեռելին հոտը չառնու. երի-

զապատ Ղազարն աղու կերպարանք ունի՝ բաց աչքերով: Կոյն երեսին քովընտի դիրքով դժագրած է Քրիստոսի Ալակերպութիւնն:

40. Քրիստոսի մուտն յԵրուսաղէմ ի շով: Զակէքէս տղայակերպ՝ ծառի վրայ, կամ ճիւղ կտորող մանուկ մի:



Թիւ 18.

41. Հրեշտակն ի վերայ գերեզմանին Քրիստոսի. զիմացը՝ Կանայքն Իզաբեբբը, որոց մէկն ունի ի ձեռին երկայն կոթով յերեփի կամ խնկանոցի նման աման, (Թիւ 19):

42. Համբարձումն Քրիստոսի. ոտից քով երկու զաւարեալ հրեշտակաց ձեռք տալով. ներքեւն 12 (ոչ 11) Առաքեալք, երկայն եր-

կայն մատներով ձեռուրնին վեր վերուցած. մէջ տեղ կեցած է Ս. Աստուածածին, Խերկու կուսանսք, երեքն այլ լուծապակ. կուսանքն բաղուկնին վեր առած են չափաւոր, իսկ Ս. Աստուածածինն կրծոցը վրայ ափերը բացած:

43. Հոգեզալուստ. 12 Առաքեալք բազմած են, նայուածքնին և ձեռաց. դիրքն զանա-

զան կերպով. Պետրոսի ոտից տակ բարձ
կամ, պատուանդան կայ. վարի կողմն՝ երկու
կիսանձանց մէջ կանգնած է թագով և օղբրով
չնորհաղէմ կոյս մի խալածեւ պարէգօտիւ,
երկու ձեռաց մէջ դաստառակի պէս լաթեւ

դէն մը բռնած, որ կամ Ս. Աստուածածին
կամ եկեղեցի ներկայացընէ. Հոգին Ս. կամ
առաջ նկարուած չէ, կամ յետոյ մէկն բա-
րակ դիծերը այլանդակեր է, հինին նշան
մի չկայ: Տիրամօր անկողնի անձն՝ կոյս մի



Թիւ 19.

Թուի, զարմացմամբ նոյն կողմը նայող. ձա-
խակողմեանն այլ իր կողմը նայող այծամօ-
րուք մէկն, որ մատով բան մի ցուցընէ:

44. 45. 46. Երեւթ՝ Երիսկոս կաթողի-
կոսի կոնդակն են:

47. Աւետարանի մի ճակատ է. սրանկին
կամարի մէջ է մանկաղէմ աւետարանին,
պրակն ի ձեռին. յատակին գոյներն լա-
զուարտ և ոսկի:

48. Պօղոս Առաքեալ, մեծ լուսապսակով,

կանգուն կեցած, զարմացական նայուածով. յաջում պրակ մի, ձախովը ցուցնելով դիմացը (յետոյ) կոշտ գծագրած և դէմքը քերած այլանդակ բան մի, որ ստից ձեւէն թուի թէ գեւ ըլլայ։ Սոյն երեսին քովընտի գծագրած երկու դէմք այլ կան, բայց շատ չնչուած, հագրեւ նմարուին. վերը կեցողն՝ խալանիչ լուսապակէն գուշակուի որ Քրիստոս է, վարինն՝ ի ծունկ իրած է։

49. Վերեւ մէջտեղ վեցթեւեան հրեշտակ մի, մէկ կողմն՝ այնպէս տեսող Եսայի մարգարէն, պրակն ի ձեռին, միւս կողմը՝ Դանիէլ. ներքեւն երեք անձինք, պրակ ի ձեռին, միւս ձեռքով օրհնողք. մին գրուած է Մովսէս, գոյնն ճարակ. միւսն՝ Պետրոս. երրորդն Յոզ, թուի կաթողիկէ թուղթ գրող առաքեալն Յուդա։

50. Մէկ կողմն Յակոբոս, անշուշտ Եղբայրն Տեառն, պրակ ի ձեռին, քալողի ձեւով, բաւական բարակ գծուած. միւս կողմն

մեծկակ դիրքով և հաստ գծերով Առաքեալ մի թուի, մէկ ձեռքն ի վեր վերուցած, իր վրան այլ երկնքէն օրհնող ձեռք մի կայ. ինքն միւս ձեռք կ'օրհնէ դիմացը ծունկ դրած թագաւոր մի. զոր նոր և յետին տեսող մի կարծեմ է Տրդատ, և գրեմ է Գրիգոր Լուսաւորիչ։ Երեսին երկայնութեամբ քիթը ցցած մարդագէտ և զարդախառն նշանաւոր մեծ Ե գիր մի կայ. որ գուցէ մեծագիր Սաղմոսի մի առաջին գիրն ըլլայ, (Երանեալ են ամբիջք)։

51. Ճակատ մի գրոց. վերի կողմն սեւ ու սպիտակ ագուցիկ զարդ մի. վարի կողմը կնիք մի զարնուած է, երկու բաժնուած, վարի մասին կ'երեւի Ես, բայց ոչ Եսայի։

52. Երեսն պարապ մնացեր է, յետոյ մէկն կիսկատար անձ մի գծագրեր է։

53-4. Իմաստասիրի և գինւոյ վիճարաւորութիւնն է գրուած. որ է այս։

ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՎԵՃ ԸՆԴ ԳԻՆԻՆ ԲԱՐԲԱՌԱԲԱՆՍ

Խաղողն ասէ. Երբ ամէն միք հասանի,
Համոզմ' մեղր եմ պիտանի.
Գունովս վարդ եմ ամենի.
Բընծան մտնում ւ ի կարասնի,
Եւ մեծարիմ յեկեղեցի.
Ձիս կու ընուն ի սուրահի,
Դընեն յառաջ թագաւորի.
Սըշակն որ վաստակի՝
Սան օր ինեւ մըխթարի.
Շուտով առնու, ուրախ լինի.
Յինքըն քարշէ զերդ սիրելի.
Կոխուիմ յընծան, լինիմ գինի.
Ով որ ըմպէ՝ ուրախ լինի։

Իմաստասիրն ասէ.

Յաղթէիր ի քո բնութեան.
Քամ ունէիր քո քաղցրութեան.
Բորբոքիս յեռանդութեան,
Եւ դեղ լինիս յիմարութեան.
Առաջնորդ պռննդութեան
Եւ անխրատի խառնակութեան։

Գինին ասէ.

Ես այնու յերկիր եկի՝
Որ սըգաւորըն միթարի.
Ինեւ սեղանըն զարդարի,
Եւ սիրելին զհիւրն ընդունի.
Հարսանիքըն յորդորի,
Պաքեալ մարմինք արուցանի.
Ոխակալն յանդիմանի,
Որ կայ խոով՝ ինեւ խաշտի (հաշտի).
Սեղանն՝ ամէն բարեօք լըցուի

Եւ տրամութիւն փարատի.
Սէրն ի մարդոյ սիրտ տարածի.
Աստուած՝ ինեւ փառաւորի.

Իմաստասիրն ասէ.

Գինի, զու յես շատ գովելի,
Եւ ոչ սըրբոց զու սիրելի.
Շինչ որ մարդ կայ առաքինի՝
Ամենեւին զքեզ չընդունի.
Դու՝ բողաց ես սիրելի,
Արեքցողաց մեծարելի.
Ով զք զեզնով խիստ մոլեգնի՝
Բամէն բարոյ ինքըն զրկի.
Թէ դահեկան հազար ունի՝
Աջատանայ, մուրող լինի.
Չմայր որդոցն իւր չընդունի.
Օտարականքն (են) սիրելի։

Գինին ասէ.

Է՛ր խօսիս դառն ու զոժար,
Կարգես զբանըդ զո յերկար.
Մեքիսեղեկ անհայր անմայր՝
Արրահամու սուրբ և արդար՝
Ձիս ի դէմ եբեր յարմար,
Եւ ընծայեաց սիրելեար։

Իմաստասիրն ասէ.

Ըմպել եղեր Նոյի,
Խայտառակիչ նահապետի.
Ի կրտսեր նոր զաւակի՝
Պատճառ եղեր անիղորի.
Խաղք արարեր զինքն ամենի,
Պատմել ի մէջ հրապարակի.

Աստուածաճօս⁽¹⁾ մեծ հզօրի,
Խելաց չետուր նորա տեղի.
Մերկացուցեր ծիծաղելի.
Անիծիցն անպատմելի⁽²⁾
Պատճառ դու եղեր յերկրի,
Ամէն մարդոյ որ գեղջ ըմպէ:

Գլինին ասէ.

Ընդ իս՝ ամէն մարդ միանայ
Եւ ըմպելոյ զիս կամենայ.
Թագաւորն ուրախանայ,
Իւր իշխանացն պարգեւք տայ.
Ծառայքն ամէն առ նա կենայ,
Զերդն ածէ⁽³⁾ եւ արբենայ.
Բաշխէ շատոց տուրս և խիւայ:
Այր ու կին երբ միանայ՝
Ինեւ նոցա սէրըն շատենայ.
Թէ կամի հուրն? (հիւրն) որ գնայ,
Երբ՝ զիս տեսնու՝ ի տեղն կենայ.
Եւ աղքատն որ արբենայ՝
Զերդ թագաւոր ուրախանայ.
Զիւր արտմուծիւն մոռանայ
Այնու ինդ⁽³⁾ ինքն խնդայ:

Իմաստասէրն ասէ.

Ի Աղօժ չար սնուցած,
Դատելք Ղովտայ արքեպուստ,
Պողոսկութիւն ի միտ ամած,
Քան զամենայն մարդ յիմարած.
Երկու դատերըն յղացած,
Կասկած ի յիւր սիրտն չընկած.
Թէ չէիր դու անդ խըմած՝
Զեր այդ փնտրէ յերկրի գործած:

Գլինին ասէ.

Զերկընչին դու յԱրարչէն՝
Յամենեցուն պարգեւողէն,
Որ զիս եհան ի սուրբ կողէն,
Բիւել առատ աղբիւրօրէն.
Բաշխեաց յաջոյ կենարարէն,
Ի հրաշալի վերնատանէն.
Արեւալ յիւրոց աշակերտաց:
Ամայէ ի սուրբ վիմէն,
Ի քանիւն յատարարդէն,
Ի Քրիստոսի սուրբ յարենէն⁽⁴⁾:

Իմաստասէրն ասէ.

Մեծ և հզօր պատարագին
Որ ի քեզ հաստատեցաւ.
Բայց առանց քեզ աղէկ⁽⁵⁾ չեղաւ.
Եւ պատուիրան Տեաւալն լուծաւ:

Օրինադիրըն՝ խաբեցաւ,
Որդին ընդ հօրըն վիճեցաւ.
Կին ի յառնէն բաժանեցաւ.
Ի վատակոյն ձեռնն լուծաւ,
Աչեցըն լոյսն պակասեցաւ.
Յերկար գլուխըն ցաւեցաւ.
Լերդն ի փորին խիստ խաշեցաւ,
Հանց՝ որ ք հոգ մահու իջաւ:

Գլինին ասէ.

Որ ագահ և արբեցող՝
Ես հաւաստի եմ սպանող՝
Որ խելացըն չէ կարող.
Ես այնպիսեացն ելայ փորձող.
Որ ըմպելոյ զիս չէ կարող.
Նմա չվայելեմ որ չեն խմող.
Որ ընդ բերանն ինքն փսխող
Եւ չարախօս զերդ շուն խաշող⁽⁵⁾:
Ես իմաստնոցն ելայ սիրող.
Երբ խըմէ՝ բարեգործող.
Նա աղքատաց լինի բաշխող
Եւ սիրելեացն իւրոց զովող,
Բարեբանող և նուագող.
Ի պաշտօնի լինի հնչող,
Եւ թէ լինի ոք հեղձուածող՝⁽⁶⁾
Պատասխանոյ լինի տուող:

Իմաստասէրն ասէ.

Թէ քննել ըզբեզ կամին՝
Անքնելի է քո բարին,
Վասն մեր սուրբ խորհրդին,
Որ Աստուծոյ որդիք լինին.
Ի հրեշտակացն զասն դասին,
Անանց փառքն պսակին:

Գլինին ասէ.

Յիշեցո յառնւորիս,⁽⁷⁾
Զոր քո աչօքդ կու հայիս,
Եւ մի յինէն կեղծաւորիս:
Թէ ոչ ըմպես՝ բայց փափագիս.
Որ սակաւ խմէ նա զիս՝
Բաղում սիրէ զիր սիրելիս:
Յերկար ես փառք եմ աշխարհիս,
Փառք և պատիւ աստընւորիս.
Ես զարդարեմ սիրով մնիս,
Գոյն խմողին՝ կարմիր զերդ:
Թէ շահիլ կամիս դու զիս՝
Մի յաճախիր որ մոլորիս,
Երբ լինինք ի հարանիս:
Քո բան ինչ կայ ի յեղիւրիս?
Զիս կ'ածես ի կուժ կաւիս.
Կամ պղնձի մոշուպայիս.
Ի յարծաթի առէք դուք զիս,

1. Այսպէս է գրուած:
2. Թեքիւս Բաշխէ և ասողին վերջը դրած է վերջ. միւս
ասողին սկիզբը՝ նախ:
3. Գրուածն որով չերեւիր:
4. Այս տեղ բանի մի ասոյ պահած կարծութիւն:

5. Եւլող:
6. 7. Այսպէս է գրուած:

կամ ի յոսկի ամանանիս.
Թէ ազգատ ես որ չունիս,
Երկու փողոյ (դիր) ի յապկիկիս,
Այնով խմէ յերակ դու զիս,
Եւ մի ազահ, որ չլինասիս:
Յամէն նեղոյ ի զատ լինիս,
Առողջ մնաս ի յաշխարհիս:
Իմաստասերն ասէ.

Հեռանալ պարտ է ի քէն
Քան զամենայն մարդ՝ ի չարէն.
Զի որ զքեզ յերակ խմէ,
Զպատուիրան Տեառնն չառնէ,
Եւ զվախճանի օրը չյիշէ.
Ոչ Տէր մեղայ՝ անձինն ասէ,
Զժամհարի ձայնն չըլտէ.
Թէ լանայ որ աղօթէ,
Նայ քունն ի յալքըն զայ մտնէ.
Սիրտն դողայ, իկեքն քաշէ.
Զափն ի ճակատն իւր զնէ:
Մինչ առաւօտու լոյսն ծագէ,
Սիրտն ու գլուխն յերակ ցաւէ,
Թերդ չար հիւանդ ցաւօք տանջէ.
Թէ կերակուր բերին՝ չուտէ.
Զօրն ի բանէն խափան առնէ.
Մակար, չէիր լեալ դու յորթէ,
Մեք խմէաք ի ցուրտ լըրէ:
Գիկնի՛ն ասէ:

Էն որ ընդ Հօր է յեութեան՝
Վասն իւր. անճառ խոնարհութեան

55*. Երեսին վերեւը կամ յետոյ գծա-
գրած կամ հին գծերը հաստընցած մեծա-
մուռզ մէկ մի, գիրք կամ տուն ի ձեռին. դի-
մացը կայ հին և կարմիր գծերով նոյնպէս
գիրք մի բռնող մէկն, բայց դէմքն խանգարած
և մաշած էւ Վարի կողմն այլ կայ կիսանձն
պրակաւոր մի մօրուանի, մագերն նման Յովհ.
Մկրտչի նկարուած գլխոյ. կ'օրհնէ դիմացը
կեցող աւելի փոքր պրակաւոր մի մանկադէմ
վայելուչ. ասոր մագերն այլ ծածանեալ:

56. Հաւանօրէն է Մատթէոս իր Աւետա-
րանը գրող. պարզ գծաձեւ:

57. Թանձր կարմրիկէ գծերով և բաւա-
կան կենդանի կերպարանօք Եսայի մրգէ, Դա-
նէլ, երրորդն անանուն՝ քայլողի ձեւով. վա-
րի կողմը՝ Ամփս մրգ, պրակը երկու ձե-
ռօք տարածած, Միգիլա և Յովել: Զգեստնե-
րուն վրայ նշանակուած են գունդը անուանքն
չգ. կէ. (կանաչ), ոսկի. աշ. և շատ տեղ
քո, որ չեմ գիտեր ինչ զոյն նշանակէ:

58. Այս երեսիս վերեւն այլ են Ար-
դիոտ և Երիլ երկու փոքր մարդարէք. վարն
ալ երեք՝ առանց անուան. ասոնց լուսա-
պակաց միջոցը Թանձր կարմրով կամ սե-
ւականաչով ծեփեր են յետոյ:

Եկեալ կամաւ իրխանութեամբ՝
ի հարանինս ուրախութեան,
ի փեսային ի ցընծութիւն,
Թագաւորաց մեծ խնդութիւն:
Գինի սրբոց ուրախութիւն,
ի հարսանեաց ի ցնծութիւն:
Որ խմէ զիս գոհութեամբ՝
Ես նմա զեղ կենդանութեան.
Բայց որ խմէ ազահութեամբ՝
Ես նմա մահ եմ կորցուեան:
Իմաստասերն ասէ.

Գինի, ըզքեզ դար(ով)իցի.

Քաղցր և անոյշ բաժակ բարի.
Ես մեղայ սուրբ Արարչին՝
Որ զքեզ ստեղծեց բաժակ բարի.
Քաղցրը պտուղ յոյժ ցանկալի,
Քան զամեն միւր զեր գովելի.
Յերակ դու փառք ես ամենի,
Փառք և պատիւ Թագաւորի.
Քեզնով հազար չար խափանի.
Որ կայ խոռով՝ քեզնի հաշտի:
Նայրըն մեծ փառք բազմի,
Որդոցն՝ բարին օրէնք կարգի.
Ես քեզ ընդէ՛ր մեղադրեցի,
Զի դու բաժակ ես գովելի.
Ան մարդն որ քեզնի մոկեցնի՝
Ինքն իւր անձինը մեղք լինի:
Մարդըն չար և գու....

59. Վայրի մարդն էր, եթէ այսպէս ու-
զեր է կարծել ընդօրինակողն, և ոչ դեւ
մի: Այլ ճիւղաղին մարմնոյն կիսէն վարը,
ձեռքերն, գլուխն և կրծոց մասն մի՝ սեւա-
ներկ են, մնացեալ մասն կարմիր կամ Թանձր
աղիւսագոյն. (Թիւ 20):

60. Այս երեսին վերը հաւասարամասն
խաչ մի կայ, չորս Թեւերն մէկմէկ զոյգ թըռ-
չուններով ձեւացած. մէկ կողմը խաչանիշ
քահանայական զգեստով անձ մի, երկու ձե-
ռօք բռնած պրակ մի և դաստառակ կամ
ուրարին փէշը. միւս կողմն այլ քիչ մի ցած
ուրիշ խաչանիւ: մի նոյնպիսի. աւելի վար
Ս. Աստուածածին Յիսուս ի գրկին. իր ձովն
այլ Ս. Յովսէփ՝ օրածայր գաւազանաւ. իսկ
ի միւս կողմն՝ անհունի թէ և բաւական ճար-
տարագիծ՝ փետրամազ, երկայնաքիթ կլոր-
ալուի բու հաւն. (Թիւ 21):

61-2. Ս. Աստուածածնի ի Թաղումն տա-
րուին՝ իրեն յանկոյնի դազադուռ, զոր վեր-
ջընեն ութ լուսապակե Առաքեալք և հե-
տեւորք. դազաղին եզերքէն կախուած են
այն ամբարիշտ Հրէին երկու բազուկներն՝ որ
կ'ուզեր կործանել զդազաղն, և հիմա կոծպեալ
Թեւօք ի ծունկ ինկած՝ Թուի ներումն խըն-

զրել: — Թղթին միւս երեսն այլ ներկայու-
ցընէ Տիրամօր Թաղումը, որ վերնոյն պէս բաց
երեսօք տեղաւորուի ի գերեզմանի. մէկն
թիկունքէն բռնած, իսկ միւսն ոտքերէն. ա-
սոր քով երկու մոմավառ կուտանք. միւսոյն
քով այլ երեք անձինք, որոց վերեւն երկու
թեւաբարձ հրեշտակք, դիմացն այլ երեք

հրեշտակք. իսկ ի միջին կեցած է Քրիստոս
խաչանիշ լուսապսակաւն, ի ձեռին խան-
ձարապատ փոքրիկ մի, որ նշանակէ զՀօգի
Մօրն, զոր տանի յերկինս: Այս ամենքն բա-
ցատրեն մեր Հարց երգած շարականն ի վե-
րափոխումն Ս. Աստուածածնի. « Այսօր ժո-
ղովեալ Սրբոցն ի միասին, հրանելի Աստ-
ւած»:



Թ. 20.



Թ. 21.

քեալքն և Ս. Կուսանքն, իսկ ազգեստիւք
պայծառացեալք լուցանէին՝ զլապտերս իւ-
րեանց... Տեսան իսկ ինքն գոլով եկեալ՝
բազում հրեշտակօք »; և այլն: Իւրօր պատ-
կերն նուրբ կապոյտ գծերով է, և դէմքերն
բաւական վայելչութեամբ. ամենքն այլ մարդ

և հրեշտակ՝ լուսապսակք են, բաց ի Կու-
սանաց, որոց թերեւ բաւական համարուած
է գէսն և քօղն. (Թ. 22):

63. Պատկերին վրայ գրուածքն վկայեն.
ինչ ըլլալը, երկու կանաչք, խոշարերքն. Հրեշ-
տակն նստեալ, և վէմն գերեզմանին Քրիս-

տութի, զոր յետոյ մէկն կարմրով գծեր է, մինչ
քնան կապուտագիծ է. (Թիւ 23):

64. Համարձումն կամ Յարութիւն Քրիս-
տոսի. Քրիստոս յօգս բազմեալ պրակիկ
ի ձախումն, ալովն օրհնելով. շորս հրեշ-

տակը Թեաւտարածք և ծնգածալը՝ չըլանակ
մի ձեւացընեն Յիսուսի բոլորով: Պատկերն՝
Քրիստոսի Համարձման պատշաճի, բայց
ներքեւը ուրիշ անձ չըլլալով՝ մէկն Յարու-
թիւն կարծեր է, և հինկեկ գրով գրեր է.



Թիւ 23.

« Մարիամ ու հրեշտակն յայս տեղս պի-
տին »:

65. Յիսուս փրկիչ խաչապահ բազմեալ
յաթոռ չորեքկերպեան, ալովն օրհնելով, ա-
ւետարանն ի ձախում. այս կողմէս կրանանն

Յովհ. Մկրտիչ, յաւակողմն Ս. Աստուածա-
ծին: Յիսուսի պատմութեանս վարի կողմերը
այլ և այլ գայնանիչ տառեր կան, ի. ք. ճ. զ.
(լազուարտ. բեհեղ. զննուֆր): Աշխատոր է
այս պատկերիս ներքեւ մէկ կողմը պփանկար

ծնրադիր կրօնաւոր մի, ինչպէս գուշակութի
գլխէն վարկախուած կնգուղէն, և թուի պատ-
կերացս նկարիչն:

66. Վերեւ հարեւանցի գծագրած խորան
կամ հակատ մի Աւետարանի, վարն այլ
անձ մի մէկ ձեռքը կարկառած:

67. Զգնաւոր կամ կրօնաւոր մի խաչանի: Կըն-
գըզով, երկայն նեղ գաւազանաւ, յաջկողմն եր-

կայնանիգակ և երկայնասրունք պինաւոր մի.
միւս կողմը թագապսակ կոյս մի, լայն վեր-
արուաւ թեւերը ծածկած, և վերարկուին
վերի մասերն իրարու եկած տեղէն՝ նաւու
խարըսխի ձեւով բան մի կախուած. ստոր
քով՝ լուսապսակ, անմօրուս, պրակաւոր եւ
րիտասարդ մի. ներքեւը, երկայնմօրուք
ծուկ գրած աղօթաւոր մի, փոքրիկ պրակ



Թիւ 23.

կամ ծրար ի ձեռին. դիմացի կողմէն մեծ-
կակ և երկայնամատն ձեռք մի գծագրած
է, թուի յետին գրչէ:

68. Մեծ ձեւ մի, գըրտէն վեց կիսաբո-
լոր, մէջն կիսաբոլորից գծերն երկայնած և
յիւրար խառնած, հարտար և վայելուչ:

69. Հմայական աղօթքն են գոր ի սկըզ-
բան յիշեցինք (եր. 290):

70-5. Բարոյական խրատքն և խառնա-
լեզու ոտանաւոր բանն. վերջի երեսին ներ-
քեւ կարճ յիշատակն նախաատկութեան Սի-
րունի լաճին և թուականն. (տես 290):

Յիշեցինք առաջացուց (եր. 291) այս ո-
տանաւոր գրուածք նիւթն և լեզուն. հեղի-
նակն թուի վերջի կիսուն մէջ յիշուած

Թաղոնսն . այդ անուամբ ծանօթ է Թօխադցի մզտեսի մի , երկրեզու քերթուածներով , և Սեւ րաստացի երէց մի եւս : Քննելու է և Թաւրոսի քով յիշուած՝ հոգեով տկար Ղաասին :

ուղիթայ

Ստեղծեց զԱզամ և զԵւայ .

Էլաքի ւար ուշմաղայ .

Փէլի բարայ : (Խեղճ հայրիկ) :

ԱՖիրիս հուպէնադիր .

Տես զՍաղայել և զԳ(տ)ցիր .

Գեւ բուհուանայ շուլութիւլ : Փէլի .

Անկթթ ? դեւ շուտ .

Ջնաղլաթն էառ դեւն շուտ :

Ղիւմաթի շէտան շուլութ : Փէլ .

Դեւ արգամին ,

Յանդունդք ի վեր սեւ քամին .

Թայէգաանն հոտ համին : Փլ .

Շէտան շասսայ . . . հագ

Հետ Ազամայ սկսաւ վատ ,

Ոնդայ օլդի դեւ մարդ : (¹) Փլ .

Բլզուլթ թայմուրդի զսայ

Ասաց ի յԵւայ .

Էմէւ աւլասան խուդայ : Փէլ .

Հաւայ շուն խորդապան մէւ ,

Տեսաւ զինքն տկուղ հեւ ,

Ալգարդի շէթան դեւ : Փէլ .

Ազամ շունդի դրայանհալ

. . . տացեալ ? բեմահալ ,

Ոնդայ դօփոթի զիլուղալ : Փլ .

Խաթրայ շունդի տարիան

Մէլ թզնոյն ալ մտան ,

Ոնդայ զաթուրդի իման : Փլ .

Խուդայ ամադ դարմիան .

Ի սկզբանէ . . . նարան .

Հաղամ քարիմ ըռահման : Փ .

Ազամ քուլայի րիայ .

Տէր զիս խարեաց գէմ Եւայ .

. . . մուրդայ դաւայ : Փ .

Նաքուֆ դամաւքի մահոր .

Չայդ ստտանայ փորեաց խոր .

Տուրսար ? իշխար ? զահաբահոր :

Ազամ քիսաֆ թասբահէլտ .

Ի մահն եկնաւ ինքնան միւտ . (²)

Զօր Էլադի շէգան զիշտ : Փլ .

Ազամ ամառ դարլըհան .

Վարդին տեսաւ փուշ փոխան .

Գունիաղայ դալդի նշան : Փլ .

Դեւ բըզուլթրայ Ազամ .

Ջնոգիտ ինճ տուր , քեզ լուս տամ .

. . . փեյադուր մուգամ : Փլ .

որ այս գրութիւն վերի տան մէջ այլ գրութի Ղաասա . մի թէ մականո՞ւն Թադոսի , թէ անոր բարեկամ , կամ թէ բուն հեղինակ բանիս :

Ազամ նայի տուգրիս .

Հազար բերան զիմ հոգիս .

Ազարդի ենայ փուփիս : Փլ .

Ջանլառ ասիտիմ Ենուլք

Էսդիր ասեմ քեզ նոր գովք .

Պաշինդայ վար դամուր բորք : Փ .

Բաղէշան ըսմանչուր .

Պտղոյն չի կերայ նայ ճուռ

Նայ հոյէէք միշնայ հոյ ժուռ : Փ .

Ջանլայ բըբուր դամբալայ

Էնէղ էին էր սալայ .

Իքիսի գալուր դալայ : Փ .

Եսայիայ բըֆար մուտ ,

Կոյսն յղանայ մեզ թաբուտ .

Ողուլ ծնի հաւրուզուտ : Փ .

Մուսայ բըզուլթ բաթուրիթ ,

Որդի ծնի փթթանդիթ .

Շէթան նայ իրուարիթ : Փ .

Ջաքարիայ և Ռունան

Են մեծ վկայքն երեկայն .

Օնդայ գաղուրդում իման : Փ .

Ջաբուր . . . ալթ թայութ

Ի խաշտ ի գայ նա թաբուտ .

Ուլամի ալալ լայիմութ : Փ .

Լոյս ի լուսոյ խու . . . այի .

Ջըհան դասան դարայի .

Սուրաթի հոտ նմա . . . այի : Փէլ .

Ֆրիշտա ամառ գէ աման .

Քեզ աւետիս , Մարիամ .

Բարթուշովաթ հաղայան : Փէլ .

Մարիամ էգի իրաւար .

Հետ քեզ շունիմ հս խաբար .

Բասման զիմայ դուրուզդար : Փ .

Մարիամ բըբաւթ . . . անայ .

Ջըռուռն փակեց , մարդ չբանայ .

Ֆրիշտայ գիրդի մար . . . անայ ? Փ .

Ֆրիշտայ . . . ի Ջիրբայիլ .

Բանն ի Հօրէն է , զԳ(տ)ցիր .

Սան բու սօզի էղին բիլ : Փ .

Մարիամ բըգօ , շուքը ուլայ .

Տէրն է հայտեր Ազամայ .

Տօղրու տանուլս մարգարայ : Փ .

Մարիամ բըզուլթ Եղսաբէթ .

Նա յարգանդէ վկայեց ,

Սանդայ սուլութ վարդապետ : Փ .

Մարիամ մըտաւ ի յայրին .

Փար հարանէք ու բըրին .

Ողուլ տօղ(տ)ի նուրուդին : Փ .

Անգան շաղըրդի յԵւայ .

ՋՔրիստոս արեկ , առ տղայ ,

1. Միթէ նման վայրէ մարգուն (Թիւ 20 յեր . 391) :

2. Այսպէս է գրուած :

Աղամբայ քարդիմ՝ դաւայ՝ Փ.
 Ներդայայ գալդի այան՝
 Որդին ի Հայր ի նրման.
 Խօշ ամադի նաւլըան՝ Փ.
 Աջէպ օօզ դուրթի մդի.
 Էն ստեղծողին մեծ փառքի-
 Ուրանադան իսալքի՝ Փ.
 Աւլ՝ ի խելադի ոսքիար.
 Ձքեզ հաւատամ լոյս անճառ՝
 Խաւդամաթի թուարդար:
 Կամաւ եկար ի խաշին.
 Խօզ դասուփայ՝ քարոփարչին՝
 Էլայ տուգուն ւարիչին՝ Փ.
 Գուլմանայ՝ գալդի դան.
 Ով կու կանգնի դէմ դռանն՝
 Շմէրէտ դարադաւան՝ Փ.
 Շէթանի պասդի չարի.
 Էտ Աղամայ էր մեծ բարի.
 Իբլիսաքարդի մգարի՝ Փ.
 Խեւաւեղին ? սանդաւար.
 Յի՛նչ դնդացիր ւ յինչ եկար.
 Ռուսաթի քարդիուքար՝ Փ.
 Աղամ էդի Ռաբանայ.
 Յամէն լեզու Տէր մեղայ (1).
 Շէթան դէմաւ Ռաբանայ
 Քան զանդունդն ի վեր կու կենայ.
 Բէհէլ դարուրը մանայ՝ Փ.
 Սալիպ գրիֆթայ բարդօշ.
 Բանն ի Հօրէն է սարխօշ.
 Խօշ գալ զնդէտու հօշ:
 Սօլադ ուզում ուլան ?
 Հօր և Որդու սուրբ նշան.
 Բահար զըբան գեհզ կու յիլամ՝ Փ.
 Գողահրաց քարուէրան,
 Երբ փօսեցաւ մէկըբան,
 Եր ու զօզ օլդի հէրան՝ Փ.
 Մանամ գալդում Աղամ օուր.
 Աղայեմ գծեաւ ի յիս տուր.
 Բիարըդին բազնուր՝ Փ.
 Բայ Աղամ բըզուվթ բիադար.
 Նա դիւա.... հազար
 Ջանլար ւարին ? բայէբար՝ Փ.
 Ղանտաւլինայ համբարճաւ,
 Հրեշտակք ...մաց...
 Փէշիփդար գբարօեցաւ ? Փ.
 Աւդուլ, Աթայ, Սաբբ Հոգին
 Երրորդուվթ....
 մատայ.. նլարբրին (1) Փ.

Քան գարեգակ պայծառ ես,
 Եղիմարա դու հայր ես,
 Քաշտի չրայ...
 Բանդայ զուլամ գունախքար
 Ղաւասին է հոգով տկար,
 Թօբայ քանի մի...
 Ողորմի սաէ Թադոսին,
 Քրիստոս հանգչի յիւր հոգին,
 Էտ լսողացդ ամէնին.
 Երբ լսեցիք զաւարանէն՝
 Էսդիր ասէք զՀայր - մեղէն,
 Բետեւէն օր զՈղորմէն՝ Փ.
 Ձէհէ Մարիամ սափոր ոսկի,
 Ձէհէ զուգրադի բընամբան.
 Մընար գՔրիստոս լոյս ի յայրին:
 Աջէպ իշտուր շուգամ հայրամ,
 Բիաթու քաւլուգա թըրքին.
 Մոսխ էդուր ես եմ Աստուած.
 Հաւատամ ճմարիտ ես դու.
 Մոսխ սանսան եղին իման:
 Չունիս թարսան տանուխ մոնքերի.
 Վկայ բերեմ քեզիկ զնիլի,
 Համ թաւրիթ համ գարուր,
 Համ հոտքին ? դուգար դաւան.
 Թէ փիւր խօսքն է սաւհանլայ,
 Դիգար քիրաթ թուամ չուրի,
 Բիարըիէշ կաշ յաղօթիս.
 Բուդուր գալդի հաղուռաշման.
 Չունմէ փարսի թէ ինչ խեկաւ.
 Բայ թուգում քի չուն գալդի.
 Դու տես գեհզ ի հայիլի,
 Քօթոտ ուզուն քուլաւաթան:
 Մալիքլար սուլութ էդար.
 Բայ փէլի հուանայ թէ հոգի,
 Ձէհէ դարիայ խորու խորհուրդ.
 Աջէպ մաղդանքի գուվթի ինսան:
 Ազար փոտսան, մահէհինսան,
 Ասաց թէ հայ բըլաւթարայ.
 Էնայ աղբըբ բայ ֆարմանըբ,
 Ռաւան... հոգիս դուրբան:
 Հաղարանաֆրին ըրբայ,
 Բայթու աղբար չունդան սսի ? փ,
 Եր ընկուղ մաղդայ նուր օլտուն,
 Չորեք դիմաց դուլ ւ օհհան:
 Եղին է նաղտունու որդին,
 Ջուգա նստեր բըգօ դաւաս,
 Եղին հաշդուր ? օհհի զուգսի,
 Թէփոր չի գիգար բօօշէթան:
 Մանեհ ամատ իբըն Մարիամ,
 Կամաւ եղաւ զուգին զուրբան.
 Խուդայ գալդի խաղաս Մայրամ,
 Սայալինսան դէթուր իման:
 Վըլայեմ ճմարիտ որդոյն
 Սայան գալդում բիլէ Աղամ,

1. Տոշ մի պակաս է:

1. Այս բառս Դիդ երեսին վերջինն է. Թուի թէ հ
 Աղամ-Ենայի վէպն այլ չուն վերջածայ, փոռաարութեամբ
 Ս. Երրորդութեան Հիսուսին թուի, զամ զրուածք,
 Թե հ. վերնագիր չկայ ԴԵ երեսին վրայ, կըրնայ ես
 երկուքին միջև թուգթ մի կորած ըլլալ:


Տանում յանդունդք ի վեր զդեւ,
Բըմանաթ նաղլաթ բար շէտան,
Իսայ ու Մուսայ ու Դայութ
Վկայ իմ անառակ որդոյն,
Մանամ ինչիչ ⁽¹⁾ նայէ զուրան
Տանուի, Թափրիթ զարուր ֆրդան,
ԶԲանն Աստուած Բուհալայ,
Բու զուն Թարլէլագի,
Մարիամ հաղար անաֆրին բդայ.
Բայթու աւլըդ փղարդիմ. ան.
Բոօ Բովան, տար աւետիս.
Բու զուն փիր նաւ Լուան զալդի.
Բզանամ զարդանի իրիս.
Բայ ֆարմանի փղար աւհման.
Ընգաւ զոզն ի վէրէդ մալզուն,

Թուդարկայ բարքիմէ բանդի.
Մանաւ զալզում սալիպ բարդօշ.
Բըքունամ զօզախըդ ւ այրան,
Ի Զընկառիթ հայէ ւ ըմպէ,
Յետեւ աղբէր շովաթչուն մայի,
Ղադամդ առ ու սասայ զանցանդ
Գէղար ժանգէդ շովաթռաշան,
Մանամ յա... յերին հանիս,
Զայնէ բագրօ զով որ հանիս.
Բըդէ Թալիմ բիայ մուգ...
Էզուր նաղմաթ բըխորդու նշան.
Ստեղծած տրդար սըէաքաթ..
Շուդի ագուաւ, զարայ զարդայ,
Բիայ Ղաւաս, սասա մեղայ.
Թուր.. աւհբար շովաթռաշման:

76. Ինն կիսանն Փոքր մարդարէք, որոց
պրակաց վրայ գրուած են անուանքն, բայց ու
մանց չնշուած. կարդացուին Զաքարայ: Ամովս,

Միքաայ, Յովել, Արդիոս, Նաոս, Ամրայ-
կոսմայ:

77. Մեծ երկրեզուեան, ժանեւոր, եի.



Թիւ 24.

բանաւոր և բաշաւոր վիշապ մի. (Թիւ
24).

78. Զարդանեք բուսեղէնք, որոց մէջ մեծ
աքաղաղ հաւ մի. փոքրիկ մի եւս, արծուաւ,
նման մազլօք քառակուսի տուփ կամ տոմս
մի բռնած:

1. Թեքուս Խէլէ (աւետարան):

79. Երկուս զազանք, ինձ կամ ընձառիւծ, ահարկուս այօք և կզակօք:


80. Այլեւայլ կենդանեաց փոքր պատկերք, Միեղջերու, Բորենի, և այլն, որք սու վորարար աւետարանի Խորանաց եզերքն. բուսմ նկարուին:

81. Զորս Թռչունհիք, և երկուս զարգա. խառն Թռչունք:

82. Քրիստոս բազմեալ, զոր երկու ծընկածալ հրեշտակք վերցընեն. վերեւ գրուած

է, եթէ ոչ ի հաւաքողէն, այլ հինկեկ. Տեւսիրն Ենովքայ: Ներքեւն այլ նոյն ոճով գրուած և նկարագծեալ կիսանձը յայտնող. « Առաջին Թագաւորն Աղսպար, որ եգիտ զ'Բժ կենդանակերպսն. յորդոց Սեթայ: Ի զլուխն երկայն ձաղարանն. զտակ, մէկ ձեռն կէս վերուցած, միւսն բան մի ցուցընելու ձեւով. զգետտուց զոյնն զբուի ոսկի, լազուարտ և ճնարակ:

Շարայաբեյի



ՊԱՏԾՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

(Տես յ'էջ 337)



ՄԻՋԵՆԻ ցմահ Միխիթարայ արքայի և քանի մը տարի ալ տնդին, Մերոյն Ղազարու միաբանից ինքնագիր երկասիրութիւնք կամ Թարգմանութիւնքն, ինչպէս ըսինք, կը տպագրուէին առ Պորթուգի. բայց երբ հայազիր տառից և անոնց կազապարաց տեսարք եղան, սկսան իրենց ուզած և կամ շահաւոր կերպով ծառայող տըպարանատեսարց ձեռքովը օգտուիլ: Բնականաբար չէր կրնար Պորթուգի գոհ ըլլալ այս փոփոխութենէն, մանաւանդ թէ կ'ենթադրէր որ մասնաւոր արտուումութիւն մը իրեն տըրուած ըլլայ հասարակապետական կառավարութենէն, և իրաւունքէն չէր ուզեր հրաժարիլ. ուստի զատ ուզեց բանալ Միխիթարեանց դէմ: Այսպիսի անհամաձայնութեան մը նկատմամբ հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք Ուխտիտ Ժամանակագրութենէն. « Առ Ժամանակօք անցեալ տարւոյ (1754) ելին ոմանք. ձեռնարկել ի տպագրութիւն գրեանց մերոց... մանաւանդ Անտոն Պոռ-

թուին. որ ապառնայր զգրեանս մեր՝ որպէս զՅունացն՝ առանց ակնածութեան ինչ տպագրել, վասն ստորունոյ մեր ի տպարանն նուրա: Վասն որոյ և ես վճռեցի ճար տանել այսմ փաստս: Ետմն ամիս հարկ եղաւ մաքառիլ՝ պետական զօրաւոր պաշտպանութեամբն ալ, և վերջապէս ընդունեցաւ արտուումութիւն. առած տպարանին մէջ առնել զհրատարակութիւն գրոցն, վանքին յատուկ տառերն. և իրենց ամենայն ջանիւքն չկոցան խափանել զայն, ոչ Պորթուգին և ոչ այլք որ հետը միացեր էին: Ուստի և կը տեսնենք որ յայնմ հետէ Միխիթարեանք՝ մերթ Դեմետրեայ Թէոդոսեան, մերթ Վաղվազեան և մերթ Փիացեան տպարանաց մէջ կը գրուան գրքերնին, մինչև որ 1789ին մասնաւոր և իրենց կղզւոյն վրայ առանձին տպարան մը ունենալու հրաման կ'ընդունին:

Այլ նոր տպարանին առաջին հրատարակութիւնն կ'ըլլայ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Երգոց երգոյն Մեկնադեան գիրքը, յո-